ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանը **2025թ. հունվարի 29-ին** ժամը 14:30-ին հայտարարում է համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերի վարձակալության իրավունքով տրամադրելու բաց մրցույթ՝

Լոտ 1. Վեդի համայնքի Վեդի քաղաքային բնակավայրի Թումանյան փողոց 5 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող Գեղարվեստի դպրոցի առաջին հարկի թիվ 13 և 14 սենյակների /հատակագծի համաձայն/ տարածքի տարեկան վարձավճարի մեկնարկային գնի 5 %-ի չափով մասնակցության նախավճարը՝ 9.000 դրամ, հողամասի վարձակալության մեկնարկային գինը՝ 180.000 ՀՀ դրամ, մեկ քայլի չափը՝ 9.000 ՀՀ դրամ, մրցույթի մասնակցության վճարը՝ 5.000 ՀՀ դրամ:

Տարածքը տրամադրվում է մշակութային խմբակների գործունեություն իրականացնելու նպատակով՝ 5 տարի ժամկետով:

Լոտ 2. Վեդի համայնքի Լուսառատ բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող (Վկայական N 23102024-03-0045), 03-049-0116-0002 կադաստրային ծածկագիրը կրող, 2.132 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գնի 5 %-ի չափով մասնակցության նախավճարը՝ 1.500 դրամ, հողամասի վարձակալության մեկնարկային գինը՝ 30.000 ՀՀ դրամ, մեկ քայլի չափը՝ 5.000 ՀՀ դրամ, մրցույթի մասնակցության վճարը՝ 5.000 ՀՀ դրամ:

Հողամասը տրամադրվում է անասնապահությամբ զբաղվելու նպատակով՝ 10 տարի ժամկետով:

Հողամասերը չեն գտնվում սահմանափակումների տակ:

*Մրցույթին մասնակցելու համար հայտերը ընդունվում են մինչև **2025թ. հունվարի 24-ը ներառյալ՝** ժամը 9:00-17:00 ընկած ժամանակահատվածում (բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածի):*

Մրցույթի մասնակցության համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) մրցույթի մասնակցության հայտ

բ) մրցույթի մասնակցության համար սահմանված վճարի անդորրագիր՝ վճարված 900 425 102 101 հաշվեհամարին.

գ) անձնագիր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթերը:

Մասնակցության նախավճարը՝ վճարվում է մրցույթի անցկացման օրը՝ նախքան մրցույթի սկսելը:

Մրցույթում հաղթողին որոշելու կարգը՝ մրցույթում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

Մրցույթի կանոնակարգին ծանոթանալու վայրը՝ մրցույթին մասնակցել ցանկացողները մրցույթի կանոնակարգին կարող են ծանոթանալ Վեդու համայնքապետարանում՝ մրցույթի մասին ծանուցումը հրապարակելու պահից մինչև մրցույթը սկսվելու պահից առնվազն 30 րոպե առաջ:

Մրցույթը կանցկացվի Վեդու համայնքապետարանի վարչական շենքում /ք. Վեդի, Հ. Թումանյան փողոց 6, հեռ. 060-88-11-11/

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Վեդու համայնքապետարան:

ՎԵԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ